ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի մայիսի 31-ի ժամը 14:00-ի նիստի
N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Գյուլլո Գաբրիելի Արաբյանի**՝ ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան**:

Զեկուցողը նշեց. Գ.Գ.Արաբյանը 2009 թվականի սեպտեմբերի 11-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. նախ՝ 11.09.2009 - 31.08.2015՝ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետում՝ գործավար, այնուհետև՝ 01.09.2015 - 31.08.2021՝ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնում՝ ասիստենտ (1,0 դրույք), իսկ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից՝ դասախոս (1,0 դրույք): Վերջին 3 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Գ.Գ.Արաբյանը ծնվել է 1970 թվականի մարտի 25-ին Վրաստանում: 1987 թվականին ավարտել է Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական թեքումով դպրոցը: 1988 թվականին ընդունվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի (ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) ֆինանսահաշվային ֆակուլտետ՝ «Հաշվապահական հաշվառում, վերահսկողություն և տնտեսական գործունեության վերլուծություն» մասնագիտությամբ, որն ավարտել է 1993 թվականին՝ ստանալով տնտեսագետի որակավորում: 2006-2009 թթ. սովորել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայում «Հանրային կառավարում» մասնագիտությամբ: 16.11.2004 - 27.10.2006 աշխատել է ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ում որպես վերստուգող: 21.01.2008 - 01.10.2008 աշխատել է ՀՀ հարկային պետական ծառայությունում որպես

գլխավոր աուդիտոր: Համատեղության կարգով աշխատում է «Երիտասարդական նախաձեռնություններ հիմնադրամում որպես գլխավոր հաշվապահ: 2002 թվականից ««Գալիք» կանանց միություն» հասարակական կազմակերպության նախագահն է: Ամուսնացած է, ունի 2 դուստր:

2015 թվականին Գ.Գ.Արաբյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նա հրատարակել է 9 գիտական աշխատանք: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 3 է (1 ուսումնամեթոդական ձեռնարկ՝ համահեղինակությամբ, 2 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում):

Գ.Գ.Արաբյանը դասախոսությունները և գործնական պարապմունքները վարում է բարձր մակարդակով, վայելում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հարգանքը:

Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնը և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն երաշխավորել են Գ.Գ.Արաբյանին մասնակցելու Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Գյուլլո Գաբրիելի Արաբյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 49-ը, քվեարկությանը մասնակցել են 49-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 49, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Գյուլլո Գաբրիելի Արաբյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը

համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» (խմբ. 17.02.2022 թ. N 177 - Ն) 2-րդ գլխի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝ **Գյուլլո Գաբրիելի Արաբյանին** շնորհել **դոցենտի** գիտական կոչում **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ:

2. **Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. մայիսի 31
Երևան